

Էջ 02	Յօդուած Փառք հնձ... Վասնզի Ղեկավար եմ...	Էջ 03	Մշակութային Արձագանգ Կործողային Նոր Հրատարակությունը Կիպրահայ Համայնքի Մասին	Էջ 04	Մարզական Հայկ Գասպարեան Ախոյեան
--------------	---	--------------	---	--------------	---

Լիբանանեան Լուրեր

Սալամ Հաստատեց. «Լիբանան Մշտականօրէն Գաղթականներ Ընդունելու Յարմար Երկիր Մը ՉԷ»

Տեսակինս

Այս Ի՛նչ Անպատասխանատու Եւ Ճահիլական Գործ Է...

Տեսակինս

Տեսակինս

Երեկուան երեկոյեան լուրերէն, ի գարնանը եւ ի մտահոգութիւն ինձի՝ ակնհայտօրէն Երայ Թոնի Օրեան անունով հայկական ծագումով լիբանանցի երիտասարդի մը արկածախնդրութեան, որ ծանօթ է լիբանանեան Ազգային Ազատ Հոսանքի շարքերուն իր պատկանելիութեամբ ու նաեւ Սուրիոյ իշխանութեան համակիր իր գործունէութեամբ:

Ան Լիբանանէն շալկուելով Հայէպ գացած է՝ երեկ օգտուելով դպրոցական արձակուրդէն, որովհետեւ, ամեն մեղքիս, ան ուսուցիչ ալ է լիբանանեան կրթական համակարգէն ներս, և խումբ մը զինեալներու գլուխը անցած, (որոնք մասին կը յայտարարէ, թէ անոնք Սուրիոյ իշխանութեան կողքին կռուող Ալ Բաւտս զինեալ խմբակի հայ անդամներ են), անոնք «քաղաքական եւ պատմական» իր չզիտեցած դասերը կու տայ, ինչպէս որ ցուցարարուցաւ լիբանանեան շատ մը հեռատեսիլի կայանները:

Ան ամենավտանգաւոր համեմատութեամբ մը՝ անցեալ դարասկզբի Հայ ազատագրական պայքարի ֆիտաբանական շարժումները կը նոյնացնէ այդ խմբակին գործունէութեան հետ, անոնք մղելով կռուիլ, իր խօսքերով, Սուրիոյ իշխանութեան հակառակ, թրքամետ զինեալ խմբաւորումներուն դէմ: Կայ անելի վտանգաւորը՝ ան բաց բերանով կը յայտարարէ, որ ինչ Լիբանանէն եկած է լիբանանահայութեան անունով, անոնք զօրակցութիւն կայունելու...:

Բոլորս ունինք մեր քաղաքական տարբեր կեցուածքներն ու դրսեւորումները, որոնք ոչ մէկ ատեն պետք է հակասեն Հայ ժողովուրդի ընդհանուր ապահովութեան ու գոյութեան հիմնախնդիրին:

Այս երիտասարդին արկածախնդրի եւ ինչու չէ ցուցամովական գործելածը, որքանով ապահով կը ձգէ Հայկապահայութիւնը՝ ընդդէմ ահաբեկիչ զինեալներու հակազդեցութեան կամ վրէժխնդրութեան...: Այս ի՛նչ անպատասխանատու եւ ճահիլական գործ է...:

Ան ալ ըսեմ, որ Թոնի Օրեանը իր «Ֆեյսպուք»-ի անձնական էջով իր «քաղաքագործութիւնները» կը տարածէ, որպէսզի եթէ պատահի, որ լիբանանեան լրատուութիւնը հասանելի չըլլայ ահաբեկիչներու ականջին՝ ապա ընկերային համացանցով այդ մէկը անպայման տեղ հասնի...:

Թոնի Օրեան կոչեցեալը, կամ իրեն պէս մտածողներ կրնան արդեօք քաղաքական եւ ապահովական պատասխանատուութիւնը ստանձնել՝ եթէ Աստուած չընէ հայաբնակ Հայկապի կամ ինչու չէ՞ Պուրճ Համուտի իրապարակը թիրախ ըլլայ ահաբեկիչներու հակազդեցութեան կամ անձնասպանական գործողութիւններուն...:

Ո՞վ պիտի զսպէ այս ցուցամով ըստ երեւոյթին իր կատարածին պատասխանատուութեան գիտակցութիւնը չունեցող երիտասարդը...:



Վարչապետ Թամամ Սալամ ըսաւ, թէ Սորիթանիոյ մէջ կայանալիք Արաբական զագաթածողովին ինչ պիտի հաստատէ, որ Հիբանանէն լիբանանեան հիմնական մասնիկ մըն է: «Եթէ Հիբանանէն զագաթածողովին ինչ ըլլայ, պիտի ըսենք, թէ այդ կուսակցութիւնը՝ երկիրի հիմնական մասնիկ եւ կառավարութեան անդամ է», - ըսաւ Սալամ Սորիթանիոյ մայրաքաղաք Նուաքշըր ճամբորդելէ առաջ, ուր 27-րդ Արաբական զագաթածողովը պիտի կայանայ: Սալամ նաեւ հաստատեց, որ Լիբանան մշտականօրէն գաղթականներ ընդունելու յարմար երկիր մը չէ: «Ընչո՞ք է, որ մենք գաղթականներու համար հիւրընկալ երկիր ենք, բայց մենք բնակեցման երկիր չենք», ըսաւ ան, արեւելքէն, որ Լիբանանը արաբական ժողովուրդներու հետ վեճերու բոլոր կետերը պիտի յստակացնէ: Յիշեցնենք, որ Հիբանանէն յայտարար Սարտին Արաբական Լիկայի կողմէ ահաբեկական կազմակերպութիւն դասուած էր, որ այդ ժողովին Լիբանանի արտաքին գործոց նախարար ժաբրան Պասիլի ընդդիմութեան արժանացած էր:

Լիբանանեան Բանակը Նուսրա Ճակատի Գլխաւոր Պատասխանատուն Կը Ձերբակալէ

Լիբանանեան բանակը հիւսիս արեւելեան Արսել ւանայի մօտ, Նուսրա ճակատի գլխաւոր պատասխանատուներէն մին ղորանակալելով ձերբակալեց: Լուրը յայտնող աղբիւրը ըսաւ, թէ ինքնօրէնը չբացայայտուած զինեալը, որ այդ խմբաւորման համար զինամթերքի համադրման գծով կը գործէր՝ Արսելի եւ շրջակայքի միջեւ, լիբանանեան-սուրիական սահմանին վրայ գտնուող Ուստի Հըմայէտ շրջա-

Քապուլ Սուզի Մէջ Է 15 Տարուայ Ընթացքին Ամենարիւնակի Յարձակումէն Ետք

Աֆղանիստանի մայրաքաղաք Քապուլ սուզի մէջ խրուած է՝ 15 տարուայ ընթացքին ամենամահացու յարձակումէն ետք, որու ընթացքին 80 մարդիկ մահացած եւ հարիւրաւորներ հաշմուած էին, վերակենդանացնելով այն մտավախութիւնները, թէ Իսլամական պետութիւն (Տաէշ) կազմակերպութիւնը կը ջնար իր դիրքերը ընդլայնել Աֆղանիստանի մէջ: Աֆղանական կառավարութիւնը այժմ ՄԱԹՕ-ի օդային ուժակցութիւններու ներկայութեամբ՝ Տաէշի դէմ մղուող Նակարհար շրջանի մէջ զինուորական գործողութեան մը մէջ է, այս տարուան սկիզբը Բանի շրջանին մէջ այդ խմբաւորման պարտութիւնը յայտարարուելէ ետք: Թալիպանները, որոնք իրենց տարեկան ամառնային յարձակման անցած են եւ անելի ուժով են քան Տաէշը, ուժգնօրէն մերժեցին այս յարձակման հետ որդէ կապ ունենալ: Պայթումները, որոնք 80 անձերու մահուան եւ 231 ուրիշներու վիրաւորուելուն պատճառ դարձած էին, ամենամահացու միայնակ յարձակումը կը կազմեն՝ ՄԱԹ-ի կողմէ առաջնորդուող Աֆղանիստանի զրամամբ 2001-ի Թալիպաններու իշխանութեան անկումէն ետք:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ենթակայ է ծրագրաւորուած յարձակումի մը, որուն գործակալականապէս ձեռնարկողները վերջին երկու տասնամեակներուն ընթացքին, զանազան պիտակներու եւ պատճառաբանութիւններու ետին պահուցած՝ անձնական նպատակներ հետապնդող «ընկերներ» են դժբախտաբար:

95-ամեայ բեղուն պատմութիւն ունեցող Հայ ազգային կուսակցութիւն մը վարկաբեկելու, բաժնելու կամ փլուզումի ենթարկելու անջատողական այս փորձերը, ոչ միայն ՌԱԿ-ի անդամակցութեան երդումի դժուար են, այլ՝ Հայ ազգին ու անոր պանծալի պատմութեան դէմ՝ լարուած դաւ, որ համագործ է գերագոյն դաւաճանութեան:

Վերջերս «Վերականգնումի եւ Միութեան Շարժումի Կեդրոնական Վարչութիւն» անունով ինքնահռչակ խմբակին տարած գործունէութիւնը, մէկ տոր դրսեւորման է վերոյիշեալ այդ ազգադաւ գործունէութեան, որուն կը միտին խումբ մը մարդիկ, որոնք հետապնդածը շատ հեռու է «Վերականգնում» եւ «Միութիւն» հասկացողութիւններէն:

Յառաջ տարուած գործունէութիւնը կը մատնանշէ կասկածելի նպատակներ հետապնդող կործանիչ ընդդիմութիւն մը, որ տարիներ է վեր շարունակ փոփոխական դերակատարումներով ու դերակատարներով՝ խորքին մէջ սակայն միեւնոյն «դեկլարութեամբ», այսօր նոյնպէս եւ անելի ուժգին կերպով կը շարունակէ իր յարձակողական եւ անջատողական ռազմավարութիւնը, արգէթներ դնելով կուսակցութեան բնականոն զարգացման առջեւ ու կը միտի տարանջատելով կազմալուծել Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը (հաւանաբար նաեւ մոռցնել տալու համար իրենց կողմէ փոշիացած կուսակցապատկան ունեցուածքները): Հակառակ այս բոլորին, Նորընտիր՝ միակ օրինական ՌԱԿ Կեդրոնական Վարչութիւն իր Կեդրոնական առաջին իսկ օրէն, յանուն կուսակցութեան միանականութեան, ջանք չինայեց անկեղծ երկխօսութեան դիմելու՝ համագործակցութեան սրտբաց ու մեծահոգի առաջարկներով, վեճանձն գիշումներով, ինչպէս նաեւ կարգի հրաւիրելու ազնիւ փորձերով:

Սակայն ի գուր՝ «Ռամկավար Ազատական Կուսակցութեան Վերականգնումի եւ Միութեան Շարժումի Կեդրոնական Վարչութիւն» նորահնար պիտակով ինքնահռչակ այդ ինչ ու նոր խմբակին այսպէս կոչուած պարագաւորները, համախոհութեան մեր բոլոր ճիգերուն պատասխանեցին անտարամբանական պահանջներով եւ վերջնագրերով ու վերջապէս հանդէս գալով 25 Յունիս , 2016 թուակիր յայտարարութեամբ մը, որ եկաւ թագադրելու այդ պիտակին տակ կրօնանիչ աշխատանք տանող «ընկերներու» եւ իրենց հետեւող կարգ մը մոլորեալներու քանի մը այսպէս կոչուած ժողովներն ու յայտարարութիւնները:

Վերոյիշեալ 25 Յունիս , 2016 թուակիր անջատողական եւ կուսակցութեան աննդական կառոյցը փլուզել փորձող տիրապետչական յայտարարութեան անվերջապէս եկաւ արձագանգելու, իր հիմնարկութեան պայմանները շեղած՝ ուրիշ շատ մը եղելութիւններու կարգին, նաեւ 95-ամեայ Կուսակցութեան սուրբ դրօշն ու զինանշանը իւրացնել փորձող՝ Հայաստանի մէջ գործող ՌԱԿ Հանրապետական Վարչութեան վերջին 7 Յունիս 2016 թուակիր պատեհապաշտական եւ նոր իրացումներու ձգտող յայտարարութիւնը:

Անելի ուշ, վերոյիշեալ խմբակը՝ 15 Յունիս , 2016 թուակիր նոր հաղորդագրութեամբ մը (թիւ 7) հանդէս եկաւ այս անգամ ալ նորահնար «նկզբունքային հակամարտութեան» խորք մը տալ փորձով՝ զուտ անձնական կիրքերու եւ յաւակնութիւններու վրայ հիմնուած իրենց ընդդիմութեան: ՌԱԿ Հանրապետական Վարչութիւնն ալ իր կարգին անելի ակներեւ դարձնելով աշխարհասփիւռ 95-ամեայ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իւրացնելու իր յաւակնութիւնը, այլ առիթով մը պաշտօնապէս արտայայտուեցաւ սփիւռքի իր անգոյ կառոյցներու անունով:

Ի տես վերոյիշեալ սանձարձակ օրինակներէն, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնն կը յայտարարէ՝

1. Այսպէս կոչուած «Վերականգնումի եւ Միութեան Շարժումի Կեդրոնական Վարչութիւն» անունով տակ գործող խմբակը կասկածելի նպատակներ հետապնդող, զարտուղի եւ օրինական վիճակ մը կը ներկայացնէ, որ ոչ մէկ կապ ունի Կուսակցութեան օրինական կառոյցին հետ:
2. Հայ խմբակը կիսաւորողներն ու անոնց հետեւորդները կը գտնուին կուսակցական կարգապահութիւնը խախտող եւ մինչեւ դաւաճանութեան հասնող ընթացքի մը մէջ, որ շուտով պիտի ունենայ իր կարգապահական միջոցառումներու հետեւանքները:
3. Հայաստանի ՌԱԿ Հանրապետական Վարչութիւնը յետայսու եթէ շարունակէ 95-ամեայ կուսակցութեան իւրացնել ձգտող իր սանձարձակ յայտարարութիւններն ու գործելածը, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն, ստիպուած պիտի ըլլայ վերոյիշեալ Հանրապետական Վարչութեան հետ իր ունեցած բարոյական կապերը վերատեսուելու եւ անոր հետեւի հարկին հասնելու վերջնական խզումի:

Այս առիթով Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնն կոչ կ'ուղղէ իր աշխարհասփիւռ անդամակցութեան՝

1. Չտարուի վերոյիշեալ խմբակներուն կեղծ կարգախօսներով:
2. Հարցադրել եւ լաւ ուսումնասիրել տուեալ մարդոց յետին եւ կուսակցական շահատէսները:

Այս առիթով Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնն կոչ կ'ուղղէ հայրենի թէ սփիւռքեան պետական, եկեղեցական, ազգային, կուսակցական եւ միութեանական հաստատութիւններուն, զգուշաւալու վերոյիշեալ այսպէս կոչուած «Վերականգնումի եւ Միութեան Շարժումի Կեդրոնական Վարչութիւն» անունը կրող խմբակին հետ գործակցելու:

Վերջապէս Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնն այս յայտարարութեամբ կը հաստատէ իր վճռականութիւնը՝ անելի ուն կազմակերպելու եւ հզօրացնելու աշխարհասփիւռ իր կառոյցները, եւնելու ժամանակ ըսվելու առեւելով Հայրենիքի մէջ շուտով ստեղծելու զինք ներկայացնող իսկական եւ օրինական կառոյց մը, միասնաբար հետապնդելու եւ իրագործելու Հայրենակերտ Ռամկավար Ազատական Կուսակցութեան մեր խոնարհ՝ ի փառս եւ ի յաւերժութեան Հայ ազգին:

Վեցցէ՛ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը:

**Ի Դիմաց՝
ՈՐԱՎԿԱՐ ԱԶՏԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Սեակ Յակոբեան Ատենադպիր	Մերիխո Նահապետեան Ատենապետ
-----------------------------------	--------------------------------------

Հայրենի Լուրեր

«Սասնայ Ծռեր» Խումբը Ազատ Արձակեց Պատանդները

Ոստիկանութեան Պարեկապահակային ծառայութեան գուճի տարածքին գտնուող «Սասնայ Ծռեր» խումբի անդամները Շաբաթ օր ազատ արձակեցին վերջին երկու պատանդները՝ ՀՀ փոխօստիկանապետ Վարդան Եղիազարեանն ու Երեւանի փոխօստիկանապետ Վալերի Օսիպեանը:

Նշենք, որ նոյն օրը՝ անելի առաջ ազատ արձակուած էին եւս երկու պատանդները:

Ոստիկանութեան պարեկապահակային գուճի վրայ «Սասնայ Ծռեր» զինուած խումբի յարձակումէն 7 օր անց խումբի անդամ Վարդան Եղիազարեանը հանդիպում ունեցաւ ԱՄՏ տնօրէն Գերգի Կուրտեանի հետ՝ Արցախի հերոս Վիտայի Բալասանեանի միջնորդութեամբ եւ որոշում կայացուցեցաւ ազատ արձակել պատանդները՝ պայմանով, որ պիտի ստեղծուի մամուլի կէտ:

Այս առջնութեամբ Վիտայի Բալասանեանը «Շանթ» հեռուստաընկերութեան յայտնած էր հետեւեալը. «Այն տղաները, որ գտնուում են զօրամասում (նկատի ունի ՊՊՏ գունդը-խմբ...), մեր մարտական ընկերների եւ երիտասարդ տղաների հետ համատեղ, որոշել ենք քայլ անել: Մենք շարքային երկու ոստիկաններին առանց ռիսկէ պայմանաւորուածութեան ազատ ենք արձակել: Հիմա գործընթաց է գնում, պայմանաւորուածութեան ունենք, որ մի քանի ժամից յետոյ այդ հարցերը կ'ունենան պատասխան, որպէսզի լրատուամիջոցների համար ապահովենք չեզոք գոտում, որը վերահսկուում է ոստիկանութեան եւ ԱՄՏ-ի կողմից, շուրջօրէս մամուլի ծառայութիւնը:

«Միաժամանակ այդ պահին ազատ կ'արձակեն մնացած 2 պատանդներին՝ եւ Օսիպեանին, եւ Եղիազարեանին: Սա իրապարակ էր, որ կատարուել է մեր բոլորի կողմից՝ իմ միջնորդութեամբ»:

Նշենք, որ արդէն 9-րդ օրն է, որ «Սասնայ Ծռեր» խումբը Երեւանի մէջ գրոհով գրաւած են ոստիկանութեան ՊՊՏ գունդը եւ պատանդ վերցուցած են ոստիկաններ: Մէկ ոստիկան՝ նոյն գուճի փոխօստիկանապետ Իթթար Վանոյեանը գոհուած է: Վիտայեանն են եւս չորս ոստիկաններ Է ՊՊՏ գուճի գրոհին մասնակցած անձերէն մէկը: Մինչ այժմ իրականացուող գործողութեան ծիրէն ներս ազատուած է ինկ անձ: Այս պահուն պատանդներուն թիւը 4 է, որոնց շարքին են ՀՀ փոխօստիկանապետ Վարդան Եղիազարեանն ու Երեւանի փոխօստիկանապետ Վալերի Օսիպեանը:

Յունիսի 20-ին բախումներ տեղի ունեցած են ոստիկաններու եւ քաղաքացիներու միջեւ: 51 մարդ ընդհատուած է ինկնապնդ: Բերման ենթարկուած է 136 մարդ, ձերբակալուած է 16-ը:

Փառք հնձ... Վասնզի Ղեկավար եմ...

ՏՈՔԹ. ՃՈՐՃ ԲԱՐՍԵՂՅԱՆ
«Չարթթն»-ի աշխատակից

Որոշած էի Կուսակցական հարցերու շատ չանդրադառնալ բայց... սաստանան չար է... մարդկանց տկար կետերը լազ գիտե: Իսկ տկար կետերեն մեկը փառամոլությունն է: Այս փառամոլությունը կը կոչուի, որ կ'ախտահարե բոլոր մարդկանց անխտիր, սակայն տարբեր աստիճաններով կրնայ անոնց ոգին հիծել ու իր ստրուկը դարձնել, տառապացու պատճառներով այդ ծանր հիւանդին, եւ մանաւանդ անոր մօտիկ «երբեմն նոյնիսկ հեռու» շրջապատին: Այս հիւանդության նախանշաններն մեկը կը համարուի հիւանդին «գիտէ՞ք ես ի՛նչ սխրագործություններ ըրած եմ կուսակցության համար» նախերգանքով սկսող, «կուսակցությունը ինձի շատ բան պարտական է» գաղափարի յայտնությունը մտաւոր ապա բանաւոր արտայայտութեամբ՝ իր մտերիմներուն եւ հուսաւոր ընկերներուն: Ապա հիմնուելով իր այդ յայտնութեան վրայ, այլ միտքեր եւ հետեւություններ մէջտեղ կը բերէ հիւանդը որպիսիք՝ «ինձի վիրաւորողը կուսակցությունը վարկաբեկած կ'ըլլայ» ուստի՝ «ես անմեղսելի եմ», իսկ յետոյ՝ «քիչ մը շոյեցէ ինձի», կամ՝ «ինձի պատուելու ժամանակը չէրա՞ւ», նաեւ «սանկ... ջբանջան մըն ալ՝ լա՛ւ կ'ըլլար»: Հիւանդության գարգացման հետ մէջտեղ կու գան տարբեր ախտանշաններ, օրինակ՝ քաղաքական կուրություն, միութեանկան յիշողութեան կորուստ, գաղափարախօսական մտքերու անկապություն, ազգային տրամաբանութեան մթազնում եւ այլն:

Տե՛սան...
Նախ անհրաժեշտ է այս բառին ճիշտ իմաստը սահմանել... սա տիտղոսն է, պաշտօնն է թէ՛ դատաւճիռ...
-Եթէ պարզապէս բարձրագոյն Պատուոյ տիտղոսն է, իերախտագիտութիւն ենթակային տարած վիթխարի կուսակցական կամ միութեանկան գործունեութեան, ապա արդարացի ըլլալու է, եւ սխալ չըլլար կազմակերպութեան գործունեայ բոլոր երեց անդամներուն, որոշ տարիքէ մը ետք գլե՛տան տիտղոսը շնորհել՝ ցկեանս պատուոյ անդամ, ցկեանս վեթերան, ցկեանս երախտաւոր, ցկեանս Ռամկավար եւ այլն, սակայն այս պարագային կը մնայ սահմանել տարիքը, որմէ ետք կուսակցական կամ միութեանկան ընկեր մը կը տեղափոխուի «ցկեանս» ներքին պատուոյ ցանկին մէջ:

-Եթէ «ցկեանս»-ը պաշտօն մըն է, ուրեմն կամ պէտք է վերատեսութեան ենթարկուի այդ պաշտօնը, կամ մեր գաղափարախօսութիւնը փոխուի: Ի՛նչ գործ ունի «ցկեանս» պաշտօն մը ռամկավար համակարգի մը մէջ, ուր վարչությունները վերեն վար, մեծեն փոքր պարբերաբար կ'ընտրուին ծայրերու մեծամասնութեամբ, բան մը որ ռամկավարութեան առաջին նախապայմանն է:
-Կը մնայ դատաւճիռ մը ըլլալու պատեհութիւնը: Այսինքն, ենթակային «ցկեանս» ընտրած ու օժտած են իր անմիջական ընկերները կամ շրջապատը, իր փայլքով շլացող, «խաղիք» կտրելէ խուսափող, անոր անսպառ ու անկրկնելի տաղանդ ու հանճար համարող մարդիկ, որոնք որքան ալ բազմաթիւ ըլլան, այնուամենայնիւ ամբողջ կուսակցութեան կամ միութեան մը տարրութեամբ խիստ փոքրաթիւ կը համարուին, ուստի, այդ պատմութեան իր ուսերուն դէմքէն առաջ յիշեալ «անկրկնելի տաղանդ», լաւ կ'ըլլայ պահ մը այս իրականութիւնները ի մտի բերել, նաեւ յիշէ որ անմիջական շրջապատին տեղին ու գունան որքան ալ բարձր ինչէն, քիչ մը հեռու գտնուող ընկերքը մը համար անընտելի պիտի մնան, իսկ մեր կուսակցությունը տարածած գտած է ոչ միայն քիչ

մը հեռու, այլեւ աշխարհով մէկ... ուր շատ են այնպիսի ռամկավար կուսակցականներ, որոնց համար այդ պատմութեան ներկայութիւնն անգամ, անարգանք կը դիտուի կուսակցութեան անդամակցութեանն ընդհանրապէս եւ գաղափարախօսութեանը՝ յատկապէս: Տե՛սան օժտած «անսպառանճարներ», անտեսելով ամբողջ կեանքի մը ընթացքին ձեռք բերած իրենց իսկ երեցի խորհուրդը, ծանրութիւնը, պատկառելիութիւնը, յառաջացած տարիքը, մէկ խօսքով՝ կուսակցութեան հանդէպ ունեցած իրենց «եմէլը», կը պիղծեն ու յամառին գործակաւորներն ղեկավարել անոր, նման մեծ կազմակերպութիւն մը ստորինելու եւ կառավարելու համար պահանջուած՝ եռանդ ու կորովը ունենալ ու տալ խոստանալով, այն աստիճան որ Վահան Թէքեանին ածինները կը սկսին անհանգըստանալ: Եւ ինչպէ՞ս չ'անհանգստանան...:

Երբ փառամոլութեան ծայրագոյն աստիճաններուն հասած իր յետնորդներէն «նորին Վսեմություն» մը, նկատելով որ իր երբեմնի կայսրութեան հպատակներէն մաս մը «ընտելու համար մեծամասնությունը, որ սակարկելու առիթ չի բացուի», դարձած են իրեն «նորին վսեմություն կայսր մեծ ու հօգօ» մակիրով կոչել, ու կը համարձակին առանց իր յիշատակութեան կամ արտօնութեան, յօդուածներ տարածել իր «սեփականութիւնը» համարող հիմարկներէն «Նոր օր» կոչուածին միջոցաւ. ուստի «Կայսր»ը վրդոված այս իրականութիւնէն, հրամայած է զայն հրկիզել: Եւ կը սկսի քաջքուր մը, որուն մէջ մեծապէս վարպետ է «նորին վսեմությունը»... ան իր տաղանդը բազմիցս փաստած է Երեսնի մէջ «Ազգ»-ի ու «Կռունկ»-ի, եւ աշխարհով մէկ՝ կուսակցութիւն մը սեփականացնելու գործունեութեամբ: Կիտած յօնքերով «մէկն ու միայն»ը կը յիշորտայ՝ «Եմն է, ըսածս պիտի գրե, եւ դեռ որպէս ծայրագոյն կայսր՝ զիս պիտի ընդունի, այլապէս՝ կը կործանեմ... սա՛նոնց նայիր հէլէ՛՛ գիրկն նստած մօրուքս կը փետնէ... բայց հարցնող մը ըլլալ գոնէ թէ՛ «այդ ո՞ր օրէնքի ուժով կուսակցութեան կամ միութեան մը կալուածը սեփականությունը համարելով՝ «գիրկն նստած» կը նկատե՞ս»: Գուցէ մեծն կայսրը սկսած է չափաւոր «նոր» բանէն... մանաւանդ երբ այդ «Նոր»ը դարձած է կայսրին «հին» դեմքը ներկայացնել. «Դեմք մը, որ յաճախ կերելի փայլուն ձեւով կ'այնպիայած «հայելի»-ին մէջ, ուր ան միշտ ինքն իրեն կը տեսնէ, դիտէ ու զմայլի եւ կը բացագանչէ՛՛ «փառք հնձ... վասնզի կայսրն եմ... »:

Կուսակցությունը որբէն մեկուն պարտական չէ...
Մանաւանդ այն կուսակցականներուն, որոնք ունենալով տարբեր մտաւոր, հոգեւոր կամ Ֆիզիքական չափեր, իրենց շուքի տակ մտացած կողմնակիցներուն կը թելադրեն ու կ'ուզեն աչ ու անեակ «յիշեցնելու» կարգով յորջորջել, թէ իրենց իմաստներն այս կուսակցությունը, իրենց միջոցաւ ու պատճառով ի՛նչ նուաճումներ ձեռք բերան այս կազմակերպությունը, իրենց «անսակարկ նուիրումով» ինչպիսի՞ յաջողութեան հասաւ Ռ.Ա.Կ.-ն ու Թ.Մ.Ս.-ը, եւ դե՞ռ՝ դիմագիծ կերտող հանդիսանալ կը յաւակնին...: Կը խորհիմ թէ ամեն մէկ կուսակցական, իր գործունեութեան, աշխատանքին, անգին գոհողություններուն, կամ անսակարկ նուիրումին համապատասխան փոխհատուցում մը ստացած է արդէն հետեւեալ ձեւերէն մեկով կամ բոլորով՝
-Յոգեւոր փոխհատուցում՝ ազգին ու հայրենիքին ծառայելու պարտականությունը կատարած ըլլալու ինքնագոհունակութիւն:
-Շողջողուն փոխհատուցումներ՝ սե-

փական բաճկունին օձիքէն կախուելիք, կամ գրպանը ծանրացնող փայլուն մետաղներու օրինակով, եւ դե՞ռ՝
-Անտէնին վաստակած ու վայելած շրջապատի ջերմ հիացմունքի ժպիտներ, փառաբանման նախադասություններ եւ քաղցր կենացներ...:
Գուցէ հիմա սոյն տողերս կարդացող «կայսրը» բարկանալով մտմռայ թէ «Այ անպիտան, երբ ես կուսակցութեան որոշ ձեռք կը ղեկավարէի, դուն ու՞ր էիր...»: Այդ պահուն շատ պիտի ուզէիր մօտը ըլլալ պատասխանելու՝ «Նոյն որոշին շուքին տակ աննշմար տեղ մը՝ ուր որ եմ հիմա նոյնպէս, ուշադրութեամբ կը հետեւէի թէ ցկեանս մասաւոր կիրքը մէկ կողմ դնելով, ինչպէ՛ս ու ե՞րբ նոր ղեկավար մը պիտի պատրաստէիր, եւ ի՛նչ հպարտութեամբ ու ազնուութեամբ ձեռքդ կենացներ...»: Երբ անոնց գիտնալին որ այսօր իրենցմէ մեկը ինքզինք «կայսր» ձեռնարկելով, պիտի սեփականացնէ անոնց վիթխարի աշխատանքը, նոյնիսկ ի գին այդ ազգային կառոյցները մասնատելու, այլանդակելու կամ անոնց հաշտուի նորերը մակարածելու, արդեօք նոյն նուիրումով կը գործէ՞ին, եւ այսօր որբէն կուսակցություն կամ կազմակերպություն մը կունենայի՞՞ր: Բարեբախտաբար դեռեւս կանգուն է այդ հսկաներուն հիմնած կառոյցը, շնորհիւ անոնց նման նուիրեալներու, որոնք երբեմն նոյնիսկ «կայսր»-ի մը հովանաւորն տակ, սեփական նիւթական կամ բարոյական միջոցներով կը շարունակէն կատարել իրենց ազգային պարտականությունը, այլեւ կը գերազանցեն պահանջուածը, որպիսիք՝ բազմաթիւ տարեկան մշակութային, գրական եւ այլ մրցանակներու հովանաւորները, Յայրենիքին մէջ քար մը քարի վրայ դնելու կամ պահելու զբաղուածները, շատ աւելի հսկայ քան ինք՝ կայսրը եւ իր մի քանի գործակատարները կ'երազէին ըլլալ երբեէ:

Միջին սերունդի կուսակցական մը ըլլալով, Կայսրին ու անոր նախարարներուն որպէս երեց կուսակցականներ, շատ պիտի ուզէի փառաբանել, արքայները որպէս օրինակ յիշել, անոնց կեանքի ընթացքով ու «անսակարկ նուիրումով» ոգեւորուիլ, հպարտ զգալ որ նման գաղափարական սերունդի մը ժառանգորդն եմ...: Բայց եկուր տես որ՝ անոնց յիշելով այսպիսի յօդուած մը նստած կը գործ...: Տարիներ առաջ Երեսն, «Արշակ Չոպանեան» կուսակցական ակումբի տղացումով, գիշեր մը միջեւ լոյս մայրաքաղաքի փողոցները զարդարեցին եւ թափօտեան՝ «Յոկուտեմեր 1-ին» Երեսնը կապոյտ արթնցաւ...: Ռ.Ա.Կ. 70 ամեակի առիթով կապտաւուն ցուցաբերով ծածկեցին Երեսնի բոլոր զինամոր թարամասերը, որոնք վրայ Ռ.Ա.Կ. գինանշանին կողքը հետեւեալ գրությունը կար՝ «Ժողովուրդէն, Ժողովուրդով եւ Ժողովուրդին համար»: Երեսնական անգամ դիտար իր այդ օրերուն որ, օր մը այդ նշանաբանը ոմանք պիտի փոխարինէն հետեւեալով՝ «Ժողովուրդէն, Ժողովուրդով, իմ փառքիս համար...»:

Լիսի երաժշտական տասնամեայ դպրոցը, ապա ուսումնարանը, 1957-ին աւարտած է Մոսկուայի Պետիկներու անուան երաժշտական-մանկավարժական հիմնարկի (այժմ Ռուսաստանի երաժշտական ակադեմիա) ստեղծագործական բաժինը կրամ Խաչատրեանի ղեկավարութեամբ:
Միջայլ Թարիվերտիէ աւելի յայտնի է հանրաճանաչ Ֆիլմերու համար յօրինած երաժշտութեամբ: Ան շարժանկարի մարզի մէջ ստեղծագործած է 1958-էն, հեղինակ է շուրջ 130 ֆիլմերու երաժշտութեան, որոնց բնորոշ է ինքնատիպ մեղեդայնությունը. անոնցմէ լաւագույններէն են՝ «Եղբերու կրքան» (1970), «Պարնան տասնօթ ակնթարթ» (1973), «Տասնհինգերորդ գարունը» (1973), «Ճակատագրիի հեգնանքը կամ Բաղնիքը անուշ» (1976), «Յէ՛լ,

ԻՎԱՆԻՆ Իվան Մելգունեանի Մահուան Քառասունքին առիթով գրուած

ՇԱՐԵ ԳԱՆՈՒՏԵԱՆ

ՈՐՁՈՅՆ

Ամեն անոնը, որոնք երբեք չգիտցան իրենց համար իմ սրտիս մէջ բարձրացած Սեղանին վրայ ծիսող խունկը սրբազան...

Ամեն անոնը, որոնք իրեն առեղծուած Սը զիս տեսան, աչքիս բոցով եւ լեզուիս

Լռութիւնով եւ քայլերով փախչող, որոնք զտան իրենց ճամբուն վրայ զիս՝

Պատցնող սեր մը անծայն ու անշոյր... Անոնց, անոյշ Եանկերուն, այժմ ողորյն

Իմ անցեալիս գեղեցկութեան մէջ անմահ, Անոնց ողորյն՝ այս բառերով դողողուն...

Իրեցմէ բան չեմ ուզեր ես ալ հիմա, 2ի ստացայ, ինչ որ ինձ տալ կրնային, 2ի իրենցմով հիմա շէն է ամային...

Վահան Թէքեան

Քնարերգակ եւ սիրերգակ կոթողին՝ մեծանուն Վահան Թէքեանի այս ողբոյնը քառասունօրեայ պահէն վերջ՝ յաղթական մուտքն է երկնային Երուսաղէմի անսահմանութեան դռներէն հանդիպելու եւ փառաւորուելու հիւրընկալ Աստուծոյ դատուն:

Շնկերային համախմբումները եւ հաւաքական գորակցությունը որոշ եւ կարեւոր նպատակներու շուրջ կը կազմուին եւ կ'աճին օրունս պայմաններուն հետ համընթաց: Երկարամեայ տարողութեամբ նման հաւաքականութիւններ կտաստօրէն աւելի բարելաւ եւ ուրախ կենացի ծիլարձակումներ են, որոնք ժամանակով կը զարգանան, կ'ընդարձակեն՝ նոյն ատեն նման հաւաքական կազմաւորումներու ծիները ներդրողները կը մօտեցնեն երկնային խաղաղութեան՝գոհունակ սրտով ու պարտաստ հիւրը դառնալու իր պատկերով ստեղծագործ գերագոյն կատարելութեան, անսահմանութեան, դրախտային պար-

Տոքթ. Չարեհ Մալճեանի Յիշատակին

Եթէ ժամանակը մեզի համար կարճ եղաւ Տոքթ. Չարեհ Մալճեանին հետ աւելի մօտէն շփուելու համար , սակայն կրնանք անվարան ըսել, որ այդ կարճ ժամանակը բաւարար էր՝ լաւ ճանչնալու զինք եւ գնահատելու իր արժանիքները: Հպատակութեամբ լիբանանցի, ան ծնած է Յալէպ 1956-ին եւ յաճախած քաղաքի Քարեն Եփիէ ճեմարանը: Բարձրագոյն ուսմանը հետեւած է Յալէպի համալսարանին մէջ , ուրկէ ստացած է ընդհանուր բժշկութեան եւ ապա ընդհանուր վիրաբուժութեան մասնագիտական վկայականները: Յալէպէլ մասնագիտական կազմաւորում ստացած է Ֆրանսայի Լիոն քաղաքին մէջ, որմէ ետք ասպարեզի բեղուն գործունեութիւն ունեցած է Սուրիոյ գանազան հիւանդանոցներուն մէջ :

Սուրիոյ պատերազմին հետեանցով, Տոքթ. Մալճեան հաստատուեցաւ Լիբանան, եւ շնորհիւ Լիբանանի Բժշկական Կարգի (Սեւտիքեա) իրանդամակցութեան , ան կրցաւ իր ասպարեզը կիրարկելու իրաւունքը պահել: Ան անմիջապէս դարձաւ գործուն անդամ՝ Լիբանանահայ Բժշկական Միութեան : Հակառակ իր ունեցած բազում

գելին: Եթէ Աստուծոյ պատկերով ստեղծուեցաւ մարդը, ուրեմն մարդը անսահման կարողութիւններու տէր էակը գերագոյն տիպարին հետ է որ կը նոյնանայ իր մարմնաւոր եւ հոգեւոր անբաժանելի զուգորդութեամբ, բիւրեղացած արժանաւոր մարդկերտութեամբ:

Ֆիզիքական կեանքի առօրեայի կապանքներէն ձեռքբազատուած՝ պատրաստ ուսում մըն է մահը դէպի անսահմանություն՝ դէպի հոգեկան անսահման կատարելություն՝ որոնց տիպարները ընդհանրապէս կ'ըլլան սուրբերը իրենց կատարելագոյն մարդկերտութեան մէջ եւ ուր կ'իւրեղեն եւ մարմնաւոր տուեալներուն հետ առընթեր մարդկութեան ընդհանրապէս անհասնելի հրաշքներով յատկանշուած կ'ըլլան: Ստեղծիչին հիւրը դառնալ հոգեկան հարստութեան գերագոյն արտայայտությունն ըլլալով հանդերձ մարմնաւոր կենսիկ հարսնիքի համապատասխան խրախճանք է:

Անցեալին՝ մարմնաւոր բաժանումը հարստեան կատարելութեան մէջ կը դիմաւորուէին: Երբ հոգին լուսաւոր կը մտնայ այդ ցոլքը սպիտակութեան մէջ կը բազմապատկուի եւ հեռաւոր ուսաններէ կը ճառագայթէ եւ կը պայծառացնէ երկնայնամարդ գիշերային խորհրդաւոր պահերուն երկիւղածութեամբ ողորդելու երկրագունդի գիշերային պահերը:

Յիսուն տարիներէ աւելի երկար տեւող ծանօթութեան պտուղը արդարաւրդձեռ իր անքիծ կենսիկ՝ Իվան Մալճեանի արդարամիտներու բազմամարդ հոյլ մը հետեւորդներու եւ քարոզչի Աստուածաշունչի ոգին հանդիսացող սիրոյ պատգամը արդարութեան եւ ուղիւմտութեան ճանապարհով, ստեղծելով տիպար եւ օրինակելի ընտանեկան արդարածիորեն երջանիկ բոյնի ամբողջական տուեալները, աւելի անդին՝ ստեղծելով եւ ուղղելով արդարամիտ երկ սկզբունքներու տեր շրջանակ մը: Ոգին այդ արդար կենսիկ սերմանեց անսակարկ, անսահման գոհողութեամբ, տքեան վնասակարանութեամբ գանոնք համեմելով իր անմոռաց արամտություններով, ժպիտով եւ զուարթսիրտութեամբ անվերջ:

Էջ 03



մտահոգություններուն, երբ հարկադրուած էր իր ասպարեզը ոչինչէն վերակսիւ, տպաւորիչ էր տեսնել իր յարատեւ ներկայութիւնը եւ մասնակցութիւնը միութեան բոլոր ձեռնարկներուն՝ դասախօսություններ, սենտիքայի ընտրություններ եալլալ:

Յատուկէն կ'արժէ անդրադառնալ Վանայ Չայնի հետ գործակցաբար կազմակերպուած բժշկական յայտագրին «առողջութիւնը ոսկի գանձ է», ուր անկախ իր մասնագիտութենէն, ան կը ներկայացնէր բազմաթիւ այժմեական կիւրեր :

Էջ 03



Պատմութեան Մէջ Այսօր

Միջայլ Թարիվերտիէ (Թարիվերտեան)

Մեր թուականէն քսան տարիներ առաջ՝ 25 Յունիս 1996-ին, Սոչիի մէջ մահացած է Միջայլ Թարիվերտիէ (Թարիվերտեան), հոշակաւոր երգահան, Ռուսաստանի ժողովրդական արուեստագետ, շարժանկարի երաժշտութեան հեղինակ:

Միջայլ Թարիվերտիէ ծնած է Թիֆլիս, 15 Օգոստոս 1931-ին: Հայրը՝ Լ-ն Թարիվերտիէ, ծնունդով Լեռնային Ղարաբաղէն եղած է, իսկ մայրը՝ Սաբէնիկ ծնունդով Թիֆլիսէն է: Ան սորված է Թիֆ-

լիսի երաժշտական տասնամեայ դպրոցը, ապա ուսումնարանը, 1957-ին աւարտած է Մոսկուայի Պետիկներու անուան երաժշտական-մանկավարժական հիմնարկի (այժմ Ռուսաստանի երաժշտական ակադեմիա) ստեղծագործական բաժինը կրամ Խաչատրեանի ղեկավարութեամբ:

Միջայլ Թարիվերտիէ աւելի յայտնի է հանրաճանաչ Ֆիլմերու համար յօրինած երաժշտութեամբ: Ան շարժանկարի մարզի մէջ ստեղծագործած է 1958-էն, հեղինակ է շուրջ 130 ֆիլմերու երաժշտութեան, որոնց բնորոշ է ինքնատիպ մեղեդայնությունը. անոնցմէ լաւագույններէն են՝ «Եղբերու կրքան» (1970), «Պարնան տասնօթ ակնթարթ» (1973), «Տասնհինգերորդ գարունը» (1973), «Ճակատագրիի հեգնանքը կամ Բաղնիքը անուշ» (1976), «Յէ՛լ,

ո՞վ կայ այդտեղ» (1979, Հայֆիլմ) եւ այլն: Միջայլ Թարիվերտիէ երաժշտութիւն յօրինած է թատերական ներկայացումներու եւ ռատիոբեմադրություններու համար: Ստեղծագործած է երաժշտութեան գրեթէ բոլոր ժանրերու մէջ: Գրած է «Ո՛վ ես», «Կոմս Կալիստորո», «Սպասում» օփերանները, «Ստուներ», «Երջանկութեան պոեմ», «Աղջիկը եւ մահը», «Աղջիկը գունդի վրայ» պալետերը, «Չեռնոպիլ» երգեհոնային սիմֆոնիան, համահունգները ձայնի եւ նուագախումբի, շուքակի եւ նուագախումբի, երգեհոնի համար, դաշնամուրային փիեսներու՝ 24, ռոմանսներու՝ 15 (որոնց մէջ «Տխուր երգեր»)՝ Աւետիք Իսահակեանի խօսքերով՝ շարքեր, երգեր՝ ճագոնցի միջնադարեան բանաստեղծներու, նաեւ Ուիլիամ Շեքսպիրի, Պլեյ

Ամատուկիւնայի, Մարիան Յվետեայի, Սերկէյ Եսենինի, Վլատիմիր Մայաքովսկիի եւ ուրիշ յայտնի բանաստեղծներու խօսքերով: Գրած է երաժշտութիւն նաեւ թատերական ներկայացումներու եւ ռատիօբեմադրություններու համար: Միջայլ Թարիվերտիէ արժանացած է Ռուսիոյ Լիկա շարժանկարի մրցանակին (3 անգամներ), նաեւ Ամերիկեան երաժշտական ակադեմիայի մրցանակին: 1997-ին հրատարակուած է անոր «Ես պարզապէս կ'ապրիմ» գիրքը: 1999-էն 2 տարին անգամ մը, Ռուսիոյ Գալիլիոստ քաղաքին մէջ կը կայանայ երգեհոնահարներու՝ Թարիվերտիէի անուան միջազգային մրցոյց: Ան ղեկավարած է Խորհրդային շարժանկարի գործիչներու միութեան երաժշտահաններու բաժինը:

Մշակութային Արձագանգ

Կոթողային Նոր Հրատարակութիւն Մը Կիպրահայ Զամայնքի Մասին

Շաբաթ, 9 Յուլիս 2016-ին, կիպրական անուանի թերթը՝ Ֆիլելեֆթերոս, շրջանառութեան մէջ դրաւ ամենէն կոթողային հրատարակութիւն մը որ երբեք չէր տեսած ըլլայ՝ կիպրահայ համայնքի մասին: Հատորը կը բաղկանայ 335 էջերու եւ կ'ընդգրկէ 650 լուսանկարներ, ինչպէս նաեւ՝ տարբեր քարտեզներ, լուսաբանութիւններ եւ մանրամասնօրէն կը ներկայացնէ հայ համայնքի պատմութիւնը, անոր ներկայութիւնը ի Կիպրոս՝ անկիշէ-լի ժամանակներէն մինչեւ այսօր: Գիրքի վերջին մասին վրայ կայ մատենագրութիւնը եւ գիրքի կայացման իրենց նպատակը բերած անձանց անունները:

Այս կոթողային հատորը արդիւնքն է լայնածաւալ հետազոտական աշխատանքի, որ սկիզբ առած է Յունիս 2015-ին լրագրող Անասթասիա Շաբալլիի կողմէ, անիոնը աշակերտութեամբ ու մասնակցութեամբ՝ հետազոտող-բանասէր Ալէքսանտր Միքայէլ Հաճիլիոյի, որ 2008 թուականէն ասոյն համակ խորութեամբ

կ'ուսումնասիրէ կիպրահայ համայնքը: Ան այժմ, նշեալ հատորը լոյս տեսած է միայն յունարէնով:

Հատորը կը բաղկանայ տասը գլուխներէ, որոնք են հետեւեալները.

-Պատմութիւն Զայաստանի, հայերու եւ հայեր Կիպրոսի մէջ:

-Պատմութիւն ջարդերու, Յեղասպանութեան, պատմութիւններ այդ սեւ շնորհանէ եւ այլ պատմութիւններ պատերազմական ժամանակաշրջանէն, ներառեալ Զայական Լեզնու:

-Պատմութիւն եւ ներկայութիւն Զայական Եկեղեցու ի Կիպրոս:

-Պատմութիւն եւ ներկայութիւն Զայ կրթութեան ի Կիպրոս:

-Պատմութիւն եւ ներկայութիւն կիպրահայ ընկերային կեանքը:

-Պատմութիւն եւ ներկայութիւն հայ մարմամբարզանքի, սկաւտներու եւ քաղաքականութեան ի Կիպրոս:


-Պատմութիւն եւ ներկայութիւն Զայ կրթութեան ի Կիպրոս:

-Պատմութիւն եւ ներկայութիւն հայ մարմամբարզանքի, սկաւտներու եւ քաղաքականութեան ի Կիպրոս:

-Պատմութիւն եւ ներկայութիւն Զայ կրթութեան ի Կիպրոս:

-Պատմութիւն եւ ներկայութիւն հայ մարմամբարզանքի, սկաւտներու եւ քաղաքականութեան ի Կիպրոս:

-Պատմութիւն եւ ներկայութիւն Զայ կրթութեան ի Կիպրոս:



երաժշտներու եւ այլ արուեստագետներու. Կիպրահայ համայնքի արուեստներն ու մշակոյթը:

-Պատմութիւն եւ ներկայութիւն կիպրահայերու առեւտրի մարզին մէջ:

-Ընտրութիւն պատմութիւններ անհատներու, պահերու եւ դէպքերու՝ կիպրահայ կեանքին:

-Անանձին անձնաւորութիւններ՝ անհատներ, պիզներ, հիմարկներ:

Այս մասին կը յայտնէ «Ազատ Խօսք»:

Քանդակագործութեան Եւ Մաքրամէի Մեկօրեայ Դաս՝ «Արի Տուն» Ճամբարի մէջ

ԿԱՐԻՆ ԱՐԱՇԵԱՆ



«Արիոր հայերուն մէջ տարանդի կայծեր կան. ատոնք պէտք է կրակ դարձնել». Գարիկ Յովհաննիսեան

Շաղկաւորի գեղատեսիլ բնութեան գիրկին մէջ է այն ճամբարը, ուր «Արի տուն» ծրագրի ծիրէն ներս յիշարժան ձեռնարկներով յագեցած օրեր կ'անցնեն աշխարհի տարբեր երկիրներէ Հայաստան եկած հայորդիները: Այդպիսի օր մըն ալ անոնք պարզեցնեն երիտասարդ արուեստագետ անուսիներ Գարիկ Յովհաննիսեանն ու Զեմինէ Համբարձումեանը: Գարիկը իրեն հետ ճամբար բերած էր ոչ մեծ խաչքար, տուֆ քարի կտորներ, քանդակելու գործիքներ՝ մուրճ, բրիչ, իսկ Զեմինէն՝ մաքրամէ հիւսուածքի թելեր: ՀՀ սփիւռքի նախարարութեան համահայկական ծրագիրներու վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած այս ձեռնարկը արտասովոր եռօրեայ յառաջացուցած էր ճամբարէն ներս: Հանդիպման սկիզբը ՀՀ սփիւռքի նախարարութեան «Իմ Հայաստան» ծրագրի մշակութային հարցերով պատասխանատու, ՀՀ վաստակաւոր մանկավարժ Լաուրա Անեփսեան սփիւռքահայ պատանիներուն ու երիտասարդներուն ծանօթացուցչի հիւրերուն հետ, ներկայացուց անոնց առաքելութիւնն ու նպատակը, որմէ ետք Գարիկ Յովհաննիսեան երեխաներուն փորձ-ինչ ծանօթացուց խաչքարի պատմութեան ցուցադրելով իր վարպետի՝ խաչքարագործ վարպետ Վարազդատ Համբարձումեանի աշխատանքներու ալպովը, որմէ ետք ճամբարի բակի տարածքին մէջ Գարիկ Յովհաննիսեան ցուցադրեց իրեն հետ բերած խաչքարի օրինակը, երեխաներուն բաժնեց կարմիր տուֆ քարի կտորներ, աշխատանքային գործիքներ, բացատրեց քարին հետ աշխատելու ձեւը, եւ սկսաւ աշխատանքային եռօրեայը: Կը թուար, թէ քանդակելու արուեստը սորվելու ձգտումը պէտք է հիմնականին մէջ երկարատեւ ուղևորներուն, սակայն շատ արշիկներ եւս

ցանկութիւն յայտնեցին աշխատելու տուֆ վրայ: Մաքրամէի գաղտնիքները սորվեցընող Զեմինէ Համբարձումեանի շուրջ հիմնականին մէջ հաւաքուած էին արշիկները, սակայն անոնց շարքերուն մէջ եւս կային մաքրամէով հետաքրքրուած տղաներ: Ըստերուն համար մաքրամէն նորութիւն էր ու խոստովանեցան, որ երբեք ներկայ չեն գտնուած մաքրամէ հիւսքի աշխատանքի ընթացքին: Զանի մը արշիկները ալ գիտէին մաքրամէի մասին, կրնային աշխատիլ, միւսները կը փորձէին սորվիլ, եւ մէկը միւսին հերթ չէին տար: Այնքան ոգեւորուած էին երեխաները, որ անգամ ընթրիքի չէին շտապէր: Կարճ ժամանակ անց արդէն պատրաստ էին տուֆի փոքրիկ կտորներու վրայ եղած աշխատանքները՝ թէեւ անվարժ, թէեւ այնչափ պարզ, սակայն սիրով եղած անոնց առաջին գործերն էին ատոնց՝ խաչի ու Մասիս սարի պատկերներով: Զեմինէի օգնութեամբ պատրաստուած կեռքեր կախուած մաքրամէի տարբեր հիւսուածքները՝ արդէն պարզորոշ նախշերով էին: Ոգեւորուած էին ոչ միայն երեխաները, այլեւ՝ վարպետ- ուսուցիչները:

ճամբարՁճամբարճ
«Այսպիսի դասերու նախադէպեր ունե-



ցած ենք նաեւ երեանի մէջ՝ խաչքարագործ վարպետ Վարազդատ Յարութիւնեանի արուեստանոցին մէջ, ուր շատ երեխաներ եկած են. անոնք եղած են նաեւ Արարատի մարզի Ուրբանոք գիւղին մէջ գործող մեր «Արիոր» մշակութային կազմակերպութեան մէջ: Այսօրուան դասը անելի շատ փորձառու էր, ուսուցողական բնույթ ուներ, ասիկա ժամանցային ծրագիր չէ, կը կարծես, որ այն կու տայ իր արձագանքները, իր խմորները ու գարագուցները կ'ունենայ: Լաւ կ'ըլլայ, որ ասիկա դառնայ դասընթացը եւ ոչ թէ՛ ճանաչողական բնույթի քանի մը ժամուան ծանօթացում խաչքարագործութեան արուեստին: Կարելի է կազմակերպել արագացուած դասընթացը եւ ճամբարային օրերու աւարտին բանալ երեխաներու հեղինակային փորձիկ աշխատանքներու ցուցահանդէսը: Ես պատրաստ եմ այդ աշխա-

տանքին եւ սիրով կ'ընեմ գայն, որովհետեւ ինծի ալ սորվեցուցած են: Հիմա հրաւերներ ունիմ՝ այդ աշխատանքը ընելու Սփիւռքի մէջ: Ինծի համար շատ հաճելի էր աշխատիլ երեխաներուն հետ. այսօրուան անոնց աշխատանքներուն մէջ յատուկ մտածուած բաներ կային, որ եւ՛ գարմացուց, եւ՛ ուրախացուց զիս. բոլոր հայերուն մէջ տաղանդի կայծեր կան»,- մեր գրոյցի ընթացքին ըսաւ «Արիոր» մշակութային կեդրոնի հիմնադիր, Վարազդատ Համբարձումեանի «խաչքարագործութեան» ի ներկայացուցիչ Գարիկ Յովհաննիսեան, իսկ մաքրամէի վարպետ- ուսուցչուհի Զեմինէ Համբարձումեան ըսաւ. «Ես արշիկներուն կը պատմեմ, որ մաքրամէի պարանները առաջ գործած են տղամարդիկ, անոնք գործած են ձկնորսական ցանցեր, ծաղկամաններ, որովհետեւ ատիկա ֆիզիքական ուժ կը պահանջէ: Երբ կը պատմեմ, երկու տղայ մտեցան եւ ցանկութիւն յայտնեցին վարպետ սորվելու: Ինծի հայրս՝ խաչքարագործ վարպետ Վարազդատ Համբարձումեանը սորվեցուցած է մաքրամէի արուեստը: Ան սկիզբը մաքրամէով աշխատած է, ծաղկամաններ գործած, յանձնած խանութներուն՝ հոգալու իր ձեռքներուն ապրուստը. յետագային անցած է խաչքարագործութեան: Ես մասնագիտութեամբ դերասանուհի եմ, սենարիստ, սակայն սիրով սորվեցայ այս արուեստը: Կը սիրեմ թատրոնը: Կ'աշխատեմ «Հայրենիք» հեռուստաընկերութեան մէջ՝ մաքուր, գունեղ, լուսաւոր միջավայրի մէջ: Մաքրամէով գեղարուած եմ փոքր հասակէս. այդ աշխատանքը կը հանգստացնէ մարդուն: Գարիկը՝ ամուսինս, Արարատի մարզի Ուրբանոք գիւղին մէջ բացած է «Արիոր» մշակութային կեդրոնը, ուր երեխաներուն բացարձակ անվճար կը սորվեցնենք կազմագործութիւն, մաքրամէ, խեցեգործութիւն... Այսօր ճամբարի երեխաներուն են փորձեցի սորվեցնել մաքրամէի սկզբունքները, աշխատանքի կրթութիւնները. ես բաւականութեամբ կը ստանամ իմ աշխատանքէս»:

Այս գեղեցիկ, իւրօրինակ օրուան արդիւնքը ճամբարի տարածքին մէջ այս ու այն կողմ դրուած աւարտուն եւ անսարսփ փոքրիկ քանդակներն էին, կենդանի կախուած մաքրամէի՝ տարբեր հիւսուածքներով եղած աշխատանքը:

«Հայերն Այսօր»

«Իմ Հայաստան» Փառատօնի Հիւրերը Վարպետութեան Դասերու Կը Մասնակցին

ԱՐՓԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԵՊԳ Լրագրութեան Բաժանմունքի 2-րդ Դասարանի Ուսանողուհի

Յուլիս 21-ին «Իմ Հայաստան» փառատօնի ծիրէն ներս երեւանի եւ Արմինի անուան պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի (մշակոյթի) բաժանմունքի պարուուստի ամպիոնին մէջ տեղի ունեցաւ հեղափոխական վարպետութեան դասը: Այս անգամ մասնակիցները սորվեցան Հարս-Խանէ եւ Զոյարի պարերը: Աշխարհի 25 երկիրներէ ժամանած պարսիկներու պարուուստները մեծ հաճոյքով ու եռանդով կը մասնակցին դասընթացին: Անոնցմէ երկուքը «Հայերն այսօր»-ի հետ գրողներու արտայայտեցին իրենց ուրախութիւնն ու յուզմունքը:

«Նուռ եւ Արի» պարսիկամբի դեկլավայր Սոֆիա Եսայեան ըսաւ. «Մենք եկած ենք Կելենդիկէն, կը ներկայացնենք իմ հա-

տանքը, որուն համար շատ ուրախ ենք: Փառատօնին կը մասնակցինք առաջին անգամ, շատ տպաւորուած ենք, իսկ վարպետութեան դասերը հոյակապ են»:

Ո՛ր Մայրիքի քաղաքի «Նարիի» պարային համայնքի գեղարուեստական ղեկավար Սիւզաննա Պապայեան նշեց. «Արդէն 3-րդ անգամս է, որ կը մասնակցինք փառատօնին: Տպաւորութիւնները հիմնախի եւ, երբ բոլոր ղեկավարները համախմբուած իրենց սաներուն բերած են Հայրենիքը տեսնելու, կը պատկերացնէր ինչպիսի գգացողութիւններ եւ տպաւորութիւններ պէտք է ըլլան: Վարպետութեան դասերուն ընթացքին ստացած հմտութիւններուն մենք, դուրսը ապրելով, չենք կրնար տիրապետել, այդ իսկ պատճառով շատ կարեւոր եւ



օգտակար են մեզի համար»:

Պարուուստը Սուրբ Կաջատրեան եւս իր ուրախութիւնը կիսեց. «Հետաքրքրական է, որ այս տարի Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 25-ամեակին նուիրուած փառատօնին կը մասնակցին 40 եւ անէլ պարսիկներ 25 երկրէ: Երբ կը տեսնեմ օտար երկիրներ ապրող այցեան հայերու նման գեղեցիկ արհիթով Հայրենիքի մէջ հաւաքուած, ուրախութիւն կ'ապրիմ, որ բոլորս միասին ենք...»:

«Հայերն Այսօր»

Քաղուածքներ Օտար Մամուլէն

Յեղաշրջման Փորձէն Ետք Թուրքիոյ Մէջ 44 Հազար 530 Մարդ Աշխատանքէ Հեռացուած Է

Թուրքիոյ մէջ ռազմական յեղաշրջման ձախողած փորձէն ետք ամբողջ երկրի տարածքին աշխատանքէ հեռացուած է 44 հազար 530 մարդ:

Այս մասին՝ ըստ «Արցախփրես»-ի՝ կը տեղեկացնէ թրքական «Անատուր» գործակալութիւնը:

Ըստ գործակալութեան տուեալներուն՝ փոխադրամիջոցներու, ծովագնացութեան եւ կապի նախարարութեանն ու անոր կից կառույցներէն հեռացուած է 529 մարդ, ազգային կրթութեան նախարարութեանն՝ 21 հազար 738 մարդ, անտառային եւ ջրային հարցերով նախարարութեանն՝ 197 մարդ, տեղեկատուական արուեստագիտութեան խորհուրդէն՝ 170 մարդ, թրքական հանրային



հեռուստաընկերութեանն՝ 300 մարդ, ռատիոյի եւ հեռուստաընկերութեան բարձրագոյն խորհուրդէն՝ 29 մարդ: Աշխատանքէ հեռացումներ եղած են նաեւ այլ կառույցներէ:

ԻԿԱՆԻՆ Իվան Մելգոնեանի Մահուան Քառասունքին առիթով գրուած

Էջ 02

Անկարելի բառը դժուարութիւններուն դիմաց իր բառարանին մէջ տեղ չունէր: Նման պարագաներուն քիչ մը անէլ ժամանակ տրամադրելու էր հարթելու համար դժուարութիւնը կ'ըսէր: Կճռական, անընկրկելի խթանումով իւրաքանչիւր քաղաքի կեանքը կ'ապրէր բիւրեղ հոգով: Այդ քիչ մը անէլ ժամանակի պահանջը շատերու համար աշխատանքէն խուսափելու եւ յուսահատելու պատճառ պիտի դառնային:

Ներուն՝ կազմով պատրաստ հեղինակաւոր եւ ակնաւոր դէմքեր ըլլալու, նաեւ Լիանային, Մարինային արթուն, վառվռուն եւ ուրախութիւն սփռող մանկամարդուհիներուն:

Եղաւ առաջնորդ, մաքրակենցաղ եւ օրինակելի մեծ հոյլ մը հետեւորդներու: Յարգուեցաւ եւ սիրուեցաւ իր անմիջական եւ հեռաւոր ծանօթներուն կողմէ իր կենարարութեան մէջ եւ առաւել եւս արժանաւայելի իր հանդերձեալի զինուորագրութեան մէջ: Իր կերպարը եւ դէմքի ծախրով բանդակուած գիծերը պիտի մսան մնայուն յիշատակը իր տիպարին:

1963-ին, երբ երկրաչափական կաճառէն ներս մուտք գործեցի, առդիւն աստղ մըն էր Իվանը, իր անկարելիին դիմաց գոյութիւն չունեցող դժուարութիւններուն, հիացում եւ յարգանք պարտադրած էր բոլոր փորձեւորներուն անխտիր: Մինչեւ վերջերս իր անցելի յուշերը պատմելով իւրաքանչիւրին մէջ կը պատկերացնէր իրենց բարեմասնութիւնները եւ դրական յատկանիշները իրենց մանրամասնութիւններով... Իհրացումով կը խօսէր այն օրերու մասին եւ կ'ըսէր անոնցմէ արդէն մնացած են հազիւ մէկ կամ երկու հոգի: Իրմէ կ'իմանայի կրուստներու լուրերը այն օրերու յիշատակներէն, եւ ահա այդ ճանապարհը շարունակուեցաւ մեկնումովը պայծառացեալին: Իր յարգանքը տիպար դաստիարակներու նկատմամբ կ'արտայայտէ եւ կը հիանար: Այդ շրջանը յիշելի եղաւ երկրաչափական կաճառի ոսկեղարը եւ որուն արժանաւորապէս նպաստեց մաս կազմեց Իվանը:

Անցնող երկու ամիսներուն ընթացքին, վշտակից դարձանք մեր երկու հարազատներուն իրենց արժանաւոր կողմնակցներուն հօր կրուստներուն: Յուրակաւորութիւնները մին Անթիլիա-սի Սբ. Գրիգոր Մայր Տաճարը՝ իսկ միւսը Սբ. Վարդան Եկեղեցին: Մին ծանօթ ճարտարարուեստի ասպարեզի մէջ, քարտէցիկ պայմաններով, մաքուր կենցաղով, անէլ քան քառասուն տարիներու ծանօթութիւնով, իսկ միւսը ծանօթ մեր սիրելիին: Մէկուն յարգանքի տուրքին եղող ներկայները նուազ էին քան միւսին ներկայ եղող հոյլը՝ նուազ համեստ գմբէթի ներքոյ: Երկուքն ալ արժանիքներով լի անհատաորութիւններ անհատականութիւններ: Արդարօրէն համեստ պիտակի տակ եղող իր նոյնքան արդարատիւութեան նկարագրով անէլի հասանելի եղաւ ժողովուրդին մեծ բաղկացուցիչներուն եւ ահա այդ միսթարական ոյժին կ'ապաւինիք բոլորս՝ բաժնելով եւ Սուրբ Զոգային շունչով գտնելու դուրս իրարու շուրջ, այն հաստատ համոզումով՝ բարիին յարթական մուտքին՝ հանդերձեալի դռան սեմին՝ վճռական յարթական հետեւորդներով:

«Ողջոյն սիրեցեալներ, ամայութիւնը շէնցնող անոյշ եակներ», պիտի ըսէր Վահան Թեքեան:

Ուսապայծառ հոգին թող որ անէլի եւս պայծառացնէ երկնակամարի անսահմանութիւնը՝ Աստուծոյ տիրապետութեան անշրպետին մէջ:

Օրինութիւն եւ փառք Իր անուան եւ խաղաղութիւն սիրեցեալներուն:

Տոքթ. Չարեհ Մալճեանի Յիշատակին

Էջ 02

Միութենէն դուրս կ'արժէ նաեւ անդրադառնալ ԱՅՀԷԼ -ի հրատարակած առողջապահական «Զգրոյց» պարբերաթերթին, ուր առանց բացառութեան իւրաքանչիւր թիվի մէջ յօդուած ստորագրած էր:

Գործունեայ եւ համեստ, ան արագօրէն շահեցաւ իր պաշտօնակիցներու վստահութիւնը, եւ մօտ 2 տարի առաջ միածայնութեամբ ընտրուեցաւ անդամ Լիբանանահայ Բժշկական Միութեան վարչութեան:

Վարչութեան մէջ ան շարունակեց նոյն յանձնառու գործունեութիւնը, նոյն թափով: Սակաւախօս, ան միածանական յստակ եւ օգտակար տեսակէտներ կ'արտայայտէր եւ իր մօտեցումը միշտ

դրական էր:

Տոքթ. Մալճեան հեռու էր ցուցամուկութենէ եւ եակեղրութենէ: Վարչական ընտրուելէն ետք պատահաբար եւ անուղղակի ձեւով իմացանք նաեւ որ Սուրիոյ մէջ հասարակական բեղուն գործունեութիւն ունեցած էր:

Աւաղ, դաւադիր անտողը հիւանդութիւնը դարանակալած էր զինք, եւ կանխապես մահը պիտի գար մեզմէ խլելու այս ազնիւ, գործունեայ եւ անանձնական բժիշկը:

Սոյն գրութեամբ պիտի ուզեցնէ նաեւ իրապարակաւ արտայայտել մեր խորազգած ցաւակցութիւնները իր կողակիցին Մեանին եւ իր գաւակներուն:

Յարգանք իր յիշատակին:
Լիանային Յովհաննիսեան
Միութեան վարչութիւն

«Հայերն Այսօր»



Մարզական



▶ Աստրալիոյ Միջազգային Ախոյեաններու Բաժակ

Եռվեներին Զիջեցաւ

Աստրալիոյ մէջ սկսած Միջազգային ախոյեաններու բաժակի մրցաշարի առաջին մրցումին, Աստրալիոյ ախոյեան Մելպորնի «Վիթթորի»-ն անակնկալ մը արձանագրեց, երբ հաւասարելէ ետք Իտալիոյ ախոյեան «Եռվեներին»-ին հետ, յաղթեց անոր տուգանային հարուածներով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Մելպորնի Վիթթորի - Եռվեներին 1-1 տուգ. 4-3
- Կոլեր. Ը. Ինկիեմ 83, փոխ. Գաուլդրոտ - Զարուս Պլանքո 58,
- Այս մրցաշարքին կը մասնակցին նաեւ «Թոթընհեմ Դոգփըր»-ը եւ «Աթլետիքո մատրիտ»-ը:

▶ ԱՄՆ-ի Միջազգային Ախոյեաններու Բաժակ

Լեյսթըր Սիթի Զաղթական

ԱՄՆ-ի մէջ սկսած Միջազգային ախոյեաններու բաժակի մրցաշարի առաջին մրցումին, Անգլիոյ ախոյեան «Լեյսթըր Սիթի»-ն տուգանային հարուածներով յաղթեց Սկոտլոյ ախոյեան «Սելթիք»-ին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Սելթիք - Լեյսթըր Սիթի 1-1 տուգ. 5-6
- Կոլեր. Ի. Օ'Քոնըլ 59 - Ռ. Մահրեզ 46, փոխ. Ուլրա,
- Այս մրցաշարքին կը մասնակցին նաեւ «Պարսելուա», «Պայըր Միլիսի», «Չելսի», «Ինթեր Միլան», «Լիվըրփուլ», «Միլան», «Փարի Սեն Ժերմեն»-ը եւ «Ռեալ Մատրիտ»-ը:

▶ Եւրոպայի Մինչեւ 19 Տարեկան Ախոյեանութիւն

Իտալիա Եւ Ֆրանսա Հասան Աւարտական



Եւրոպայի մինչեւ 18 տարեկան ֆուտբոլի ախոյեանութեան կիսաւարտական հանգրուանին, Իտալիա յաղթեց Անգլիոյ Տիմաթոյի երկու կողմերէն եւ հասաւ աւարտական հանգրուան: Միւս կողմէ Ֆրանսա յաղթեց Փորթուգալիին Լոթենի երկու կողմերով: Իսկ աշխարհի ախոյեանութեան Եւրոպայի հինգերորդ ներկայացուցիչը որոշելու մրցումին, Գերմանիա տուգանային հարուածներով յաղթեց Յոլանտային: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Անգլիա - Իտալիա 1-2
- Կոլեր. Ա. Փիչչի սխալ 85 - Ֆ. Տիմարքո տուգ. 27, 60,
- Փորթուգալ - Ֆրանսա 1-3
- Կոլեր. Փ. Փաչեցո 3 - Լ. Պլա 10, Զ. Մպպիսի Լոթեն 67, 75,
- Գերմանիա - Յոլանտա 3-3 տուգ. 5-4

▶ Սկոտլոյ Լիգայի Բաժակ

Ռեյնըրդ Տարա 3-րդ Զաղթանակը

Սկոտլոյ 2016-17 տարեշրջանը սկսաւ Լիգայի բաժակի մրցումներով: Այս մրցաշարքին 40 խումբեր բաժնուած են ութ խմբակներու, իւրաքանչիւրը 5 խումբերէ բաղկացած: Իւրաքանչիւր խմբակէն առաջին դիրքը գրաւողը պիտի անցնի յաջորդ հանգրուան, իսկ երկրորդ դիրքը գրաւողն ալ յոյս ունի անցնելու: շտուպի երրորդ հանգրուանին, Կլասկոյի «Ռեյնըրդ»-ը տարաւ երրորդ յաղթանակը: Ստորեւ տեսնել արձանագրուած կարեւոր արդիւնքները.

- Իսթ Սթըրլինկլըր (Դ. Դաս.) - Ռեյնըրդ (Ա. Դաս.) 0-3
- Կոլեր. Զալիտել տուգ. 10, Ուիլսոն 35, Տոտո 90+1,
- Ինվըրնես Զալես. (Ա. Դաս.) - Տալտի Եուն. (Ա. Դաս.) 1-1 տուգ. 1-4
- Կոլեր. Ս. Պոտեն 35 - Ս. Մըրտոք 46

▶ Պրագիլի Ախոյեանութիւն

Քորիսթիլնգ Հաւասարեցաւ

Պրագիլի ֆուտբոլի ախոյեանութեան 16-րդ հանգրուանի առաջին մրցումներուն, երկրորդ դիրքը գրաւող «Քորիսթիլնգ»-ը իր դաշտին վրայ հաւասարեցաւ միջակ դիրք գրաւող «Ֆիկուերնես»-ին հետ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Քորիսթիլնգ - Ֆիկուերնես 1-1, կոլեր. Տալիլո 84 - Տոտո 59,
- Սանթա Զրուգ - Քորիսթիլնգ 0-1

▶ Օգպիլիս Կոլայի Փոխանցումի Դեղինակ

Խայաստանի հաւաքականի կիսապաշտպան Արագ Օգպիլիսը իր նոր խումբին՝ «Պեշկաբադ»-ին հետ առաջին մրցումին սեւտական «Ալ Զիլալ»-ին դէմ, դարձած է կոլայի փոխանցումի հեղինակ: Մրցումը աւարտած է 1-1 հաւասար հաշիւով: Օգպիլիսի շապիկին թիւն է 22:

▶ Սեւ Էլքրոտայս Եշանակուեցաւ Անգլիոյ Մարզիչ

Անգլիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը «Սաստըրլետ»-ի մարզիչ Սեւ Էլքրոտայսը Եշանակած է Անգլիոյ հաւաքականի մարզիչ, փոխարինելու համար հրաժարած Ռոյ Դոնընը:

▶ Աստրե Կոմէշ Պարսելուայի Մէջ



Սպանական «Վալենսիա»-ի կիսապաշտպան Աստրե Կոմէշ միացաւ «Պարսելուա»-ին: Գործարքին գումարը հասած է 35 միլիոն եւրոյի 22 տարեկան փորթուգալցի մարզիկին համար:

▶ Այսօրուան Մրցումներու Զայտագիր

Ստորեւ տեսնել այսօրուան մրցումներու յայտագիրը (փակագծերու մէջ՝ խումբին դիրքը).

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱԿԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Ժամը 14:30 Մանչեսթըր Եունայթըտ - Մանչեսթըր Սիթի
ԵՐՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՎ 19 ՏԱՐԵԿԱՆ ԿԻՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆ. ԶՏՈՒՄԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐ.

Ժամը 18:00 Նորվեկիա (2) - Սլովակիա (4)

Ժամը 18:00 Գոլանտա (1) - Ֆրանսա (3)

Ժամը 19:00 Զուիցերիա (1) - Սպանիա (2)

Ժամը 19:00 Գերմանիա (3) - Աստրիա (4)

ՍԿՈՎՏԻՆՑ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՒՄԻ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Ժամը 21:45 Ռեյնըրդ (Ա. Դաս.) - Սթերրա (Գ. Դաս.)

ՊՐԱԶԻԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Ժամը 02:00 Ֆլամենկո (6) - Ամերիքա Մինեթո (20)

▶ Պասքէթպոլ

Եւրոպայի Մինչեւ 16 տարեկան Ախոյեանութիւն

Հայաստան Զիջեցաւ Մալթային

Եւրոպայի մինչեւ 16 տարեկան պասքէթպոլի ախոյեանութեան Գ. դասակարգի 5-8րդ դիրքերու մրցումին, Հայաստանի հաւաքականը պարտուեցաւ Մալթային 63-87 հաշիւով եւ վերջին մրցումին պիտի պայքարի դասակարգի 7-րդ դիրքին համար: Հայաստանի ամենալաւ նշանակողն էր Դաւիթ Խաչատրեանը՝ 26 կէտ:

▶ Ըմբշամարտ

Եւրոպայի Պատանեկան Ախոյեանութիւն

Հայաստանի Փայլուն Արդիւնքները

Շուէտի մայրաքաղաք Մյոթիոմի մէջ տեղի ունեցող ըմբշամարտի Եւրոպայի պատանեկան ախոյեանութեան մրցումներուն, 69 քվ. դասակարգի յունահունական ոճի ըմբիշ Մալխաս Ամոյեանը աւարտական մրցումին 9-0 հաշիւով յաղթեց Հայաստանի երկրորդ ներկայացուցիչ Ալպէրթ Եղիկեանին եւ շահեցաւ ոսկէ մետալը: Ան Սախապէս յաղթած էր գերմանացի, ռուս, թուրք եւ ատրաբէյճանցի մարզիկներու կորսնցնելով ոչ մէկ կէտ՝ 30-0 ընդհանուր հաշիւով: Նոյն մրցաշարքի 50 քվ. դասակարգին մէջ Սամուէլ Գրիգորեանը աւարտական մրցումին զիջեցաւ վրացի ըմբիշի մը 0-9 հաշիւով եւ շահեցաւ արծաթ մետալ: Նոյն դասակարգին մէջ Արթուր Գալստեան շահեցաւ պրոնզէ մետալ:

▶ Զունկ Ֆու

Աշխարհի Ախոյեանութիւն

Հայկ Գասպարեան Ախոյեան



Մշակութային Յուշատետր



Ձեռնարկի անուն	Վայր	Թուական	Ժամ
«Չարթօնք»-եան Հանդիպումներ «Գ. Հանդիպում» Արցախի Հակամարտութեան Խաղաղ Կարգաւորման Հեռանկարներ»	Թեքեան Կեդրոնի, Ա. Յարկի «ՌԱԿ-ի Լսարան»-ին մէջ, Ժըմմեյգի, Պէյրուք	Երկուշաբթի 1 Օգոստոս 2016	Երեկոյեան 8:00

Պատրաստեց՝ Մարիա Ե.

Մոսկուայի մէջ տեղի ունեցող ընկ. ֆուլ աշխարհի 5-րդ ախոյեանութեան մրցումներուն, 55 քվ. դասակարգին եւ 17-19 տարեկաններու խումբին մէջ, Հայաստանի ներկայացուցիչ Հայկ Գասպարեան աւարտական մրցումին յաղթած է ատրաբէյճանցի Օմար Ալլահվերտիեւին եւ դարձած աշխարհի ախոյեան:

POLO TRAVEL

Travel & Tourism

MEA

To

ARMENIA

YEREVAN

Starting USD **350**
*taxes excluded

EVERY MONDAY & FRIDAY

HOTLINE : +961-1-258852
Mobile : +961-3-148248 / +961-3-881944
E-mail : info@polo-travel.com
www.polo-travel.com

Bourdj Hammoud - Tripoly Str. - Harboyan Trade Center - Ground Flr.

Երջանը Դեպի Ռ՝ լր

«Չարթօնք»-եան Հանդիպումներ

Գ. ԱՐՑԱՍԻ ԶԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ

ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հր Զրուցե՛լ

Հիւրանի Մօտ Հայաստանի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան

Սամուէլ Մկրտչեան

ARTSAKH (NAGORNO-KARABAKH) REPUBLIC

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի 1 Օգոստոս 2016-ի երեկոյեան ժամը 8:00ին Թեքեան Կեդրոնի, Ա. Յարկի «ՌԱԿ-ի Լսարան»-ին մէջ, Ժըմմեյգի, Պէյրուք

ՀՐԱԵՐ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆԸ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՍՏԲՈՒՆ ՎՐԱՅ

Գիրքը

Հեղինակ՝

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

«ՇԻՐԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ

ՊԷՅՐՈՒԹ 2016

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՍՏԲՈՒՆ ՎՐԱՅ

Պատանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթին մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպորտ վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: